Keywords: Constitution of RA, Eurasian Economic Community, supranational international organization, autocracy of the state, membership of the state to international organization.

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Արթուր Դավթյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Մահմեդական իրավունքը աշխարհի հիմնական իրավական համակարգերից է[1]: Մահմեդական իրավունքի ձևավորման շրջանում միայն իրենց սուրբ գիրքն էր (Ղուրանը) համարվում իրավունքի առաջնային աղբյուր[2]:

Քանի դեռ Մուհամմադը կենդանի էր և կառավարում էր մուսուլմանական համայնքով, նա մահմեդական համայնքի իրավական հարցերը լուծում էր հիմնականում առաջնորդվելով Ղուրանում պարունակվող դրույթներով: Սակայն երբ նա մահացավ պարզվեց, որ Ղուրանում եղած դրույթները բավարար չեն բոլոր պետական և հասարակական հարցերը լուծելու համար: Կյանքը հրամայողաբար խնդիր էր դնում սահմանել պետական, քրեական, գույքային, ընտանեկան իրավունքի նորմերը, որոնք չէին կարող հիմնավորվել լոկ Ղուրանի տեքստերով: Ուստի անհրաժեշտություն զգացվեց մտածելու այն մասին, թե ինչը կարող էր փոխարինել մարգարեական հայտնություններին, որոնք Մուհամմադի կենդանության օրոք ամեն անգամ հավելում ու լրացնում էին Ղուրանը, երբ զգացվում էր դրա անհրաժեշտությունը: Եթե Ղուրանում չէին գտնում այս կամ այն հարցի պատասխանը, նախ դիմում էին «նախադեպերի» սկզբունքին, այսինքն որպես օրինակ վերցնում էին

---

[1] Տե՛ս **Рене Давид, Камилла Жоффре-Спинози**. Основные правовые системы современности.М., 1996, С. 308-329:

[2] Մանրամասն տե՛ս, **Schahf J.**The origins of Muhammadan jurisprundence,1950.

մարգարեի վարմունքը նմանատիպ պայմաններում, կամ դիմում էին ավանդությանը՝ «սուննային»:

Արաբերեն սուննա (աս-սուննա) բառը սկզբնական շրջանում ունեցել է հետևյալ իմաստը «Ճանապարհ, որի ուղղությամբ անհրաժեշտ է գնալ», փոխաբերական իմաստով՝ «նախնիներից փոխանցված սովորույթ», այսինքն ավանդույթ: Մինչիսլամական Արաբիայում սուննա հասկացության տակ ընկալվում էր նահապետական-համայնական հասարակության բարոյահիրավական չգրված ադաթների կամ սովորույթային իրավունքի նորմերի հավաքածուն: Իսլամի հայընվելուց հետո այդ հին արաբական հեթանոսական սուննան մերժվեց և աստիճանաբար սկսեց փոխարինվել նոր, մուսուլմանական սուննայով: Եթե հին արաբական սուննայից ինչ որ բան անցել է նոր, մուսուլմանական սուննային, ապա դա մեկնաբանվում էր այն իմաստով, որ անձամբ ինքը՝ մարգարեն է դա պատվիրել: Սուննան՝ Մուհամմադի կյանքի օրինակներն են որպես նմուշ և ուղեցույց ողջ մուսուլմանական համայնքի և յուրաքանչյուր մահմեդականի համար որպես աղբյուր որոշելու համար մարդու և համայնքի կյանքի բոլոր պրոբլեմները:

Սուննան բաղկացած է Մուհամմադի արարքներից, նրա ունեցած արտահայտություններից և նրա հավանությանը արժանացածն դեպքերից:

Սուննան ընդունվում է իսլամի բոլոր հոսանքների կողմից որպես Ղուրանից հետո տեղեկությունների հաջորդ աղբյուր այն մասին, թե որ վարքագիծը կամ կարծիքը հաճո է Ալլահին: Այսպիսով, Սուննան լրացնում է Ղուրանը:

Ղուրանը, պարունակում էր համեմատաբար քիչ օրենսդրական նյութ: Ավելի քան 6000 համարից (այաթից) միայն 500-ն է կապված իրավական պարտականությունների հետ, և սրանց մեծամասնությունն էլ իրականում առնչվում է կրոնական հարցերի հետ, ինչպիսիք են աղոթքները, պահքը, ուխտագնացությունը: Միայն մոտ 80 համար (այաթ) արծարծում է իրավական թեմաներ՝ բառիս

բուն իմաստով, և սրանց մեծ մասը կանանց, ամուսնության և ժառանգության հարցերի մասին է:

Մուսուլմանական սուննայի գլխավոր բովանդակությունը՝ իրավունքի հարցերն են: Սուննան Ղուրանից հետո իրենից ներկայացնում է տեղեկությունների երկրորդ աղբյուրը: Այն Ղուրանի հետ միաժամանակ հանդիսանում է շարիաթի և ֆիքհի (մուսուլմանական օրենսդրության) գլխավոր աղբյուրներից մեկը[1]:

Մահմեդական օրենսդիրների կողմից հայտարարվել է, որ եթե սուննան կարող է գոյություն ունենալ առանց Ղուրանի, ապա Ղուրանը չի կարող առանց սուննայի:Այստեղից էլ ուղղադավան մահմեդականները ստացել են «ահլ աս-սուննա» (սուննայի մարդիկ, ժողովուրդ) կամ «սուննիներ» անվանումը:

Սուննաների մասին տեղեկանում ենք, այսպես կոչված, «հադիսների» միջոցով («հադիս», հոգն.»ահադիս», «նորույթ», «տեղեկություն», «պատմություն»): Հադիսները դրանք մարգարեի ասույթներն են,նրա հրահանգները, մարգարեի մասին պատմությունները, որոնք գրի են առնվել և փոխանցվել ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների կողմից:

Թեև հադիսները չեն հանդիսանում Ղուրանի հայտնությունների բաղկացուցիչ մասերը, սակայն այնուամենայնիվ դրանք կենսականորեն կարևոր են իսլամը կատարելապես հասկանալու և ընկալելու համար: Հադիսները համարվում էին Ղուրանից հետո իրավունքի երկրորդ աղբյուրը, նրա վրա է հիմնված սուննան:

Այս կամ այն հանդիսից քաղվում էին իրավական կամ ծիսական հարցերի վերաբերյալ հանձնարարականներ, ծիսական մաքրության կանոններ, սննդի վերաբերյալ կարգադրություններ, առօրյա կյանքում ու կենցաղում բարոյականության և վարքագծի նորմեր:

Կյանքը գնում էր առաջ, օրենսդիրների առջև դնելով հարցեր, որոնք նախատեսված չէին Ղուրանի և կանոնական սուննայի կողմից: Ուստի դրանց լուծման համար առաջ քաշվեցին մուսուլմանական իրավունքի ևս երկու աղբյուրներ (կամ արմատներ)՝ «իջման»

[1] Տե՛ս **Bergsträsser G**. Grundzüge des islamishen Rechts,1935:

(համաձայնություն, կոնսենսուս) և «Ղիյասը» (համեմատություն, եզրահանգում ըստ զուգադրության՝ անալոգիայի):

Իջման հեղինակավոր ատվածաբան-իրավագետների (ֆաքիհների) հավաքական կարծիքն է: Այդ աղբյուրը կիրառվում էր այն դեպքում, երբ ոչ Ղուրանը, ոչ հադիսները (սուննան) չէին տալիս ծագած հարցերի պատասխանը:

«Ղիյասի» մեթոդը դարձել էր մուսուլմանական իրավունքի չորրորդ աղբյուրը: Իրավաբանական հարցեր լուծելիս, սակայն այդ մեթոդը հուսալի չէր, քանի որ այն թույլ է տալիս կամայականորեն եզրակացության հանգել այս կամ այն գործի վերաբերյալ:

Իսլամի օրենսդրական հիմունքներն ընդունված է անվանել «ֆիքհ» (արաբերեն «հասկանալ», «խորը հասկացություն» կամ «գիտելիք»): Ֆիքհը Ղուրանին և հադիսներին համապատասխանող կանոնների մի հավաքածու է, որոնք որոշում են մահմեդականի վարքագիծը առօրյա կյանքի բոլոր դրսևորումներում[1]:

Ֆիքհի գիտություն էր (բառացի՝ «հասկացություն») կամ կրոնական իրավագիտություն, որի միջոցով մարգարեի ուսմունքից առաջացած մի ամբողջ շարք սովորույթներ և սովորություններ, արաբական և նոր նվաճած ժողովուրդների սովորույթներ, կարող էին միավորվել օրենքի ընդգրկուն համակարգի մեջ, որը կառավարում էր մահմեդականների ամենօրյա կյանքը: Շաֆիի մշակած սկզբունքներով շարիաթի համակարգմամբ է պայմանավորված ժամանակակից մահմեդականների՝ շիիթի և սուննիի հասարակական ինքնությունն ու այս աշխարհում գտնվելու զգացումը[2]:

Ֆիքհի կանոնները կոչված են կարգավորել մահմեդականի արտաքին տեսանելի վարքագիծը, նրա կողմից պարտավորությունների անմիջապես կատարումը:

Մուսուլմանական մահմեդական իրավագիտությունը ձևավորվել է Սիրիայում և Իրաքում VIII-IX դարերի ընթացքում իրավունքի քրիստոնեական դպրոցների հետ շփման հետևանքով: Իսլամական

---

[1] Մանրամասն տե՛ս **Milliot L. et Blanc F**.Introduction a'l' e'tude du droit Musulman,1987:

[2] Տե՛ս **Schachf J**.The origins of Muhammadan jurisprudence.1950.

աշխարհում գոյություն են ունեցել բազմաթիվ իրավական հարցերի գծով ուղություններ կամ դպրոցներ, որոնք միևնույն օրենքին տվել են այլազան մեկնաբանություններ: Այդ հողի վրա իրավագետների շրջանում ի հայտ են եկել հակասական միտումներ: Նրանց մի մասը հենվում էր հադիսների վրա, մյուսները պարզելով շատ ավանդությունների ոչ հավաստիությունը և հակասականությունը, որոնում էին նոր իրավական հիմքեր: Այդ բոլորի հետևանքով VIII դարից մինչև IX դարն ընկած շրջանում ծնունդ առան մեկ տասնյակ այդպիսի դպրոցներ կամ ուղղություններ: Մինչև ներկա ժամանակները իրենց ազդեցությունը պահպանել են դրանցից չորսը: Գոյություն ունեն մահմեդական իրավագիտության կամ իրավունքի չորս հիմնական դպրոցներ, որոնք ընդգրկել են ողջ «ուղղադավան» սուննիական աշխարհը: Իսլամական կրոնի մեջ բոլոր իրավական նորմերը խարսխված են Ղուրանի և սուննայի վրա: Հենց այդ երկու աղբյուրների շրջանակներում գործել են և մեր օրերում էլ գործում են վերոհիշյալ չորս մազհաբները (դպրոցները):

Իրավաբանական գրականության մեջ մահմեդական իրավունքը ավանդաբար անվանվում է մեկ բառով. շարիաթ[1]:

Շարիաթ բառը ծագում է (արաբերեն «շարիա», «շարա՛ա») «օրենքներ հրապարակել» բառից: Դա մուսուլմանական օրենսդրությունն է, կամ մահմեդական օրենքների սիստեմավորված հավաքածուն՝ հիմնված Ղուրանի և սուննայի վրա: Շարիաթ բառացի նշանակում է հատուկ ճանապարհ, որով պետք է գնան մուսուլմանները: Շարիաթի մեջ իսլամի տեսանկյունից լուսաբանվում են ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական հարցերը: Նրանում մեկ միասնական համակարգի մեջ են ընդգրկված այնպիսի օրենքներ, որոնք կարգավորում են տնտեսական կյանքը, բարոյականության և էթիկայի նորմերը, մահմեդական ծեսերն ու տոները, հավատացյալների վարքագիծը և ողջ մահմեդական համայնքի

[1] Տե՛ս **Schachf J. J.**, An Introduction to Islamic Law. Oxford, 1966**, Chehata C**. Etudes de droit musulman.Paris.1970

ապրելակերպը: Շարիաթում մանրամասն շարադրվում են արգելքները, թվարկվում են թույլատրելի արարքները և այլն: Շարիաթն ու նրա օրենքները, ըստ մահմեդական օրենսդիրների հայեցակարգի, պետք է ընդգրկեն մուսուլմանի կյանքն ու գործունեությունը՝ օրորոցից մինչև գերեզման: Շարիաթը կանոնակարգում է քրեական քաղաքացիական, ընտանեկան-ամուսնական, կենցաղային հարաբերությունները: Նրանով առաջնորդվում են մուսուլմանական շարիաթական դատարան-ներում:

Շարիաթի նորմերը բավականին հաճախ ենթարկվում են տարբեր տեսակի փոփոխությունների, կապված ժամանակի ու հասարակության փոփոխությունների հետ:

Մահմեդական իրավունքը չի բաժանվում առանձին իրավունքի ճյուղերի, ինչպես ռոմանագերմանական իրավունքը: Սակայն այնտեղ էլ որոշակիորեն տարբերակվում են հասարակական հարաբերությունների կարգավորումներն ըստ քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքի, ընտանեկան իրավունքի և այլ: Տարբերությունը կայանում է նրանում, որ իրավունքի ճյուղերի բաժանումը ընդգծված չէ և մահմեդական իրավագիտությունը դրան էական նշանակություն չի տալիս:

Այսպես, դարերի ընթացքում ձևավորվել է նաև իսլամի քաղաքացիական իրավունքը, այդ թվում սեփականության իրավունքը: Մահմեդական իրավունքին բնորոշ է գրված օրենքի և պրակտիկայի խիստ տարբերությունը[1]: Իրավակիրառ պրակտիկայում այդ տարբերությունը փորձում է հարթել ձևավորված իրավական դոկտրինը, որը պայմանավորված մահմեդական իրավագիտության այս կամ այն դպրոցի մեկնաբանության հետ և կարող է ոչ միայն տարբեր լինել, այլև իրավամերժ: Ահա այդպիսի բարդ ու բազմաբնույթ

[1] Տե՛ս **Malise Ruthven**, Islam in the World. First published in the United States in 1984 by Oxford University Press; **Schacht J.**, The origins of Muhammadan jurisprudence.1950; Smith W.C.E tuade de I' Islam dans le monde moderne.1962; **Chehata C.**, Etude de droit musulman;1970.

է մահմեդական իրավունքի բովանդակությունը և դրանում արտահայտված սեփականության իրավունքը:

Եթե մահմեդական իրավական համակարգի երկրների աշխարհիկ–պոզիտիվ օրենսդրությունը ընդունում է մասնավոր սեփականության ինստիտուտը (իրավունքը), ապա դրան չի հակադրվում և ըմբռնումով է վերաբերվում դասական մահմեդական իրավունքը: Դասական մահմեդական իրավունքի քաղաքացիական իրավունքը՝ մուամալաթը, կարգավորում է սեփականության հետ կապված հարաբերությունները: Ըստ մուամալաթի՝ ցանկացած իր, գույք պատկանում է Ալլահին և այս իմաստով գոյություն չունի մասնավոր սեփականության ինստիտուտը, իսկ եթե այն գոյություն ունի, ապա միջնորդավորված է վերին ուժով և գործող պոզիտիվ ալեհարիկ իրավունքով:

Ըստ մահմեդական իրավունքի՝ հողն ու ջուրը, որպես կանոն, չեն կարող հանդես գալ որպես մասնավոր սեփականության օբյեկտ, սակայն իրական մահմեդական աշխարհում քիչ չեն հողի և ջրի խոշոր սեփականատերերը[1]:

Մահմեդական իրավունքին խորթ է սեփականության իրավունքի բովանդակության երեք լիազորությունների՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բաժանումը: Այն ընդունում է սեփականության լիիրավ իրավասուբյեկտությունը, ինչը ըստ էության, նշանակում է տիրապետում, օգտագործում և տնօրինում՝ սեփականության օբյեկտը: Սեփականության օբյեկտ կարող են լինել ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքը: Սեփականության լիիրավ սուբյեկտներ կարող են լինել իսլամը դավանող չափահաս քաղաքացիները:

Մահմեդական իրավական համակարգում խստորեն դատապարտվում է սեփականության դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն:

Ըստ մահմեդական իրավական դոկտրինի չմշակված կամ անջրդի հողերը չեն կարող լինել սեփականության օբյեկտ, սակայն նա, ում

[1] Տե՛ս **Сюкияйнен Л.Р**. Мусульманское право, М., 1986, С,10.

կողմից այն մշակվել է (սեփական աշխատանքով կամ դրամական միջոցների ներդրումով) կարող է առաջնահերթության կարգով հավակնել դրա սեփականատիրոջ կարգավիճակին[1]: Եթե անմշակ հողը չի կարող սեփականության օբեկտ լինել, ապա այն ենթակա չէ նաև վարձակալության կամ առքուվաճառքի: Իսկ եթե հողի սեփականատերը երկար ժամանակ չի մշակում այն, ապա ըստ գործող իրավական դոկտրինի, հողը կդադարի սեփականության օբյեկտ լինելուց: Այս դոկտրինալ կարգը նպատակ ունի հողն օգտագործել ըստ գյուղատնտեսական նշանակության և խթանել ընդհանրապես հողօգտագործումը, որը կնպաստեր նաև նստակյաց կենսակերպի ամրապնդմանը:

Ըստ մահմեդական իրավունքի սեփականությունն անձեռնմխելի է, իսկ դրա դեմ ուղղված ոտնձգությունների համար շարիաթական պատիժները պահպանել են միջնադարին հատուկ դաժան պատիժները: Օրինակ, Ղուրանում ասվում է. «Եվ արու գողին և էգ գողին՝ երկուսի էլ ձեռքերը կտրեցեք ի պատիժ իրանց իբրև խրատ Աստծո կողմանե»:

Ներկա ժամանակաշրջանում մահմեդական իրավական համակարգի երկրների օրենսդրությունը սրբորեն պաշտպանում են մասնավոր սեփականությունը և խիստ պատիժներ են սահմանել դրան ոտնձգողների համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում սեփականության ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները մահմեդական իրավունքում:

Բանալի բառեր. մահմեդական իրավունք, շարիաթ, սեփականության ինստիտուտ, սեփականության իրավունք, սեփականության լիազորություններ, սեփականության բովանդակություն:

---

[1] Տե՛ս **Sohrab Behdad**, Property Rights in Contemporary Islamic Thought // Review of social Economy. 47 (Summer 1989).

ИНСТИТУТ СОБСТВЕННОСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ФИЛОСОФИИ ПРАВА

Давтян Артур
Соискатель Института философии, социологии и права, НАН РА

РЕЗЮМЕ

В данной статье автор подробно анализирует содержательные особенности института собственности в мусульманском праве.

Ключевые слова. Мусульманское право, шариат, институт собственности, право собственности, права собственности, содержание собственности.

INSTITUTE OF PROPERTY FROM THE POINT OF VIEW OF PHILOSOPHY OF LAW

Artur Davtyan
applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

In this article, the author thoroughly analyzes the content features of the institution of property in Muslim law.

Keywords. Muslim law, sharia, property institution, property right, property rights, property content.

ԻՐԱՎԱԿԱՆ ՇՓՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Անահիտ Այվազյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Իրավական շփումը իրենից ներկայացնում է իրավունքի սուբյեկտների (իրավասուբյեկտությամբ օժտված ֆիզիկական և իրավաբանական անձանց) առանձնահատուկ փոխհարաբերակ-